

ՏԻՐԱՄՕՐ ԱՆՈՒՆԸ

Քաղցրը զօղանջն այն երկնային,
Քաղցրը նըւագն այն երկնային,
Զոր սիրոյ լարն անմահներուն
Արեւուն հետ, արեւուն լոյս
Միշտ կը հնչէր սիրազեղուն,
Այդ քու անունդ էր քաղցրը կոյս:

Զայն կը ձայնէր ամպն ամպերուն,
Զայն կը կրկնէր երկինքն անհուն,
Հովն հովին հետ թեթեւ թեւով
Մարիամ անունըդ կը կանչէր,
Ու ծիծեռնակն իր թըռիչքով
Մարիամ, Մարիամ կը գեղգեղէր:

Շաղ շաղ աստղերն ալ պայլըլուն
Կ'երգէին միշտ այդ սուրբ անունն,
Երբ ամպերէն ցօղ կը տեղար,
Հովտէ հովիտ ու լեռնէ լեռ,
Ամէն ծաղիկ եւ ամէն ծառ
Այդ սուրբ անունը կը կըրէր:

Երբ լսուեցաւ երկնէ Մարիամ,
Երկիրս տըւաւ ըզբեղ Մարիամ,
Ես լըսեցի ձայն մը միայն,
Ամէն հրեշտակ եւ արարած
Սըրինգներու պէս հովուական
Քեզ կ'երգէին սիրով արրած:

Ոչ մէկ անուն կայ գեղեցիկ,
Ոչ մէկ բարբառ այնքան քաղցրիկ,
Քան թէ անունդ, հեղիկ քնքուշ,
Գողարիկ, փափիկիկ, լոյսէն մաքուր,
Զոր ինքն Աստուած այսքան անոյշ
Բառ չըհիւսեց եղեմարոյր:

Ո՛հ, ինչ սուրբ է, ինչ օրհնութիւն,
Զինչ աստղերով հիւսուած անուն,
Իր մէջն ունի խորհուրդ անհաս
Լոկ Աստուծոյ իմանալի,
Որ կը գըրկէ ամբողջ աշխարհս
Միշտ խնկելի, միշտ պաշտելի:

Իր մօրն անուան հետը փափուկ,
Զայն կը կրկնէ ամէն մանուկ,
Ու հայր եւ մայր, օրդեակ քաղցրիկ
Գերի, ազատ, հարուստ անկար
Պատերազմին մէջը մարտիկ
Զայն կը կանչեն պաշտպան եւ Մայր:

Իր անունով նաւաստիներ
Կը պատանեն ծովն եւ անդունդներ,
Երբ կը խուժէ ըմբոստ կոհակ
Աւազին գէմ ու նաւերուն
Լոկ այդ անունն ինչպէս կայծակ,
Սանձ կը դընէ փրփուրներուն:

Կը ծաղի միշտ ինչպէս արփին
Օրհնելու դաշան հեղ աղբաստին,
Ու կը խառնէ այրիներու
Արցունքներուն բուրումն հեշտին,
Որբին կու տայ յոյս ապրելու
Մահամերձն ալ կ'ազդէ երկին:

Մեղր իմ բերնիս մէջ կը հօսի,
Շրթներս կու տան քուրում վարդի,
Լեզուս կ'ըլլայ երկնի կիթառ,
Երբ կը հընչէ Մարիամ անուն
Ես կը փոխուիմ սիրոյ բարբառ
Շունչս ալ նըւագ եւ օրհնութիւն:

Արդ ես տըկար եւ արամազին,
Ինչպէս մանուկ մը լալագին,
Քեզ կը կանչեմ Մարիամ Մարիամ...
Դուն ամէն օր ամէն վայրկեան
Ինձ յոյս եղիր, մայր, ամէն ժամ
Աստուածածին Մարիամ, Մարիամ...:

Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Թրգմ. վերածեց Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ՆՈՅՆՈՒԹԻՒՆ ՏԵՆՁԵՐՈՒ

Դուն մի ըլլար ինձ արամօրէն մեղադիր
Թէ չերգեցի երբեք տենչերդ ու սէրերդ.
Կը համբուրուի ամէն ծաղիկ լոյսին հետ,
Եւ սիրտ սրտի միշտ կը կապէ մեր երկիր:

Քեզ կը խորհիմ առանց անունդ գիտնալու.
Եւ կը տեսնեմ մէջըդ ամբողջ մարդկութիւնն.
Քերթողի սիրտն է հիւրանոց ամէնուն,
Եւ միշտ գարնան ծաղիկ մ'ունի ձօնելու:

Ես չեմ ցաւիր թէ չըկարդաւ քերթուածներ,
Որոնք անունս ինչպէս ըստուեր մը կըրեն.
Հաւատա ինձ, չենք բաժնըւիր աշխարհէն

Առանց երբեք կոխելու նոյն համբաներ.
Նոյն է տենչանքն և նոյն է սիրտն ամէնուն,
Որ կը ծաղկէն ներքեւը նոյն արեւուն:

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՆ

Ծաղիկներն ալ ունին հոգի մը զգայուն
Որ դոյն կու տայ, գեղեցկութիւն թափանցիկ.
Թարմ այտերուն պէս աղջնակի մը փոքրիկ,
Որ կը փթթի նայելով միշտ արեւուն:

Կը բուրեն միշտ և կը մընան անըսպառ,
Լոյսի նըման խառնըւելով կապոյտին.
Կը սընանին միայն ցօղովն երկինքին
Աւելի սուրբ նըւիրուելու մեզ համար:

Աստուած անոնց խընամքն ունի առանձին,
Իբրեւ մանուկ եւ միշտ տըկար արարած.
Զուր կը հանէ կըրանիդներ ջախջախած,
Եւ խանձարուր կը պատրաստէ դալարին,

Որ միշտ ժըպտին և լոյս փընտուեն անդադար,
Իրենց հոգին սփռելով բոլոր մեզ համար:

ՏԽՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԵՐ ՈՒ

Կը սիրեմ ես աչքերուդ խոր տխրութիւնն
Աստղերու պէս՝ որոնք արեւ չեն տեսներ,
Կ'ոգեմ գրկել սրտէդ մեկնող ալիքներ
Այնքան նման աշնանային գոյներուն:

Կը մերձենայ թերեւս գիշեր մ'անվախճան
Օրերդ անոյշ թանձր քօղով պատելու .
Բայց քու հոգիդ նրման խոշոր սատղբու
Պիտի ծագի նոր երկինքի մը վըրան :

Անկէ անդին դուն կը տեսնես անծանօթն
Այնքան մեղի խորհրդաւոր և գաղտնի .
Այդ է մէկ էջն ալ մեր կեանքին հրաշալի ,

Գիշերին լերջ՝ տեսնել պայծառ տառաօտ:
Լու մահը միշտ հաշտ է արտում աչքերուն,
Ինչպէս ըստուերն ուղեւորի քայլերուն:

ՄՐՏԻ ՄՈՒՐԱՅԿԱՆ

Ես եմ սիրոյ մուրացիկ,
Ձեր չէմբուռն ընտանի.
Սերս կը փնտռեմ երջանիկ
Նոր վարդի պէս Մայիսի:

Բացէք ճաղերն տմրափակ.
Մռրացկանին հետ յաւէտ
Կը մանէ միշտ արեգակ,
Սէր կը մանէ բերկրաւէտ:

Ո՛հ, մի նայի՛ր եմ խոնարհ
Հանդերձնե՛րուս և սրտիս.
Ե՞ս բերած եմ ձեզ համար

Անոյշ արեւն իմ կեանքիս,
Որ ձեր շուները փարթամ
կեանքին ըստն բարեկամ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ
ՄԻԻԹԱՐԵԱՆ ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Միևթարեան նոր վարժարանի մը
հաստատութեան շնորհակց լուրը, փայլակի
արագութեամբ տարածուած Պուէնոս Այ-
րէսի մէկ ծայրէն միւսը, անառհման բեր-
կութեամբ լեցուցած է բոլոր բարեկամնե-
րու և ճշմարիտ հայրենասէրներու սրտերը:

Աւետիսը կը հաղորդէր Հ․ Սահեման վրդ-
Յերուհեան, իր գառակոկան ագնիւ մագ-
թանքներուն հետ։ Վեց տարիէ ի վեր ան-
խոնջ ու բռիկ կ'աշխատէր նա այնտեղ,
հակառակ կարգ մը դժուարութիւններու։
Ու Նախախնամութիւնը, յանձին վեհանձն
բարերարներու, կու գայ վարձատրել այս
ազնիւ մշակին ծիր ջանքերը, հայ մշակոյ-
թի ու ցեղային պահպանումի նոր վտա-
րան մը ստեղծելով Ատլանտեանի հեռավոր
ափերուն վրայ, Պուէնոս Այրէսի մէջ։

Վարժարանի շէնքին գնման գլխավոր
բարեբարն է՝ Տիար Յովհաննէս Տիարպէ-
քիբեան, Տիար Սանուկ Շիրինեանի և
Տիար Փանոս Էօրնէքեանի հետ։ Վերջին
երկուքը՝ նախկին սաներ Սուրառ Ռափա-
յէկեան Վարժարանէն։

Վարժարանը իսկոյն ամուր հիմերու վրայ զնելու մտադրութեամբ՝ կազմուած է ՀՈԳԱՏԱՐ ՄԱՐԿԻՆ մը, բաղկացած հետեւ լեւուաններէն. Տիար Հանրի Թախթաճեան՝ իբր ներկայացուցիչ գլխաւոր բարերար Տիար Յ. Տիարպէքիբեանի, Տիար Մ. Շիրիշեան, Տիար Մուրատ Էօրնէքեան՝ որդին բարերար Տիար Փանոս Էօրնէքեանի, Իւրաքերար Տիար Փանոս Էօրնէքեանի, Իւրեկ իբր Նախագահ ունենալով Միարաշ Նութեանս ներկայացուցիչ Հ. Ստեփան Վրդ. Թերազեանը։

Լրդ. Ֆերահեանը:
Նոր վարժարանին շէնքին գիրքը, ձեւը,

միջավայրը՝ գիւթիչ և տղնուտական բնոյթ
մը ունին, շրջապատուած ծաղկաւէտ բու-
րաստաններով ու ծառազարդ պարտէզնե-
րով։ Օժտուած է ներքին ու արտաքին ա-
մէնէն արդիական պահանջներով (ներքին
հեռաձայն, բաղնիքներ, կոոստուն, ջեր-
մաքաշիս)։

Սպրիլ 22ին կատարուած է մուտքը նոր վարժարանին շէմէն ներս, և բանալիները Հ. Ստեփան Վրդ. Ֆերոհեանի ձեռքը յանձնելու պահուն, բարերարները արդար հպարտութեամբ նշած են շէնքին գեղեցկութիւնը, մաղթելով որ արդիւնաշատ ըլլան Հոն վաստակողներդ անխոնջ Լանքերը:

Ինչպէս Մուրատի եւ Ռափայելի ա-
նունները մշանջնեապէս կապուած են մեր
մշակութային վերածնունդի պատմութեան
հետ, իբրեւ Հիմնադիր Հայրեր ու Մեկե-
նասներ մեր գեղարուեստասէր սերունդին,
եւ անուններ յիշատակելու համար՝ Ար-
փիարին, Վարուժանին, Ալեմշահին, այս-
պէս չենք վարանիր այժմէն տեսնելու հա-
րաւային Ամերիկայի այս նորայարոյց բա-
րեբարներու անձին մէջ՝ ապագայ սերունդ-
ներու փրկութիւնը եւ պանծացումը հայ
գրին ու հայ արժէքներուն։ Հարիւրաւոր,
մանուկներ, որոնց շրթներուն վրայ պիտի
ծաղկին այս նոր բարեբարներու անունները,
յաւախեան երախտագէտ պիտի մնան եւ
վարդի փունջերով կամ յաղթական դափ-
նիներով պիտի պճնեն անոնց ազգաշէն
ճակատները, իբրեւ ռահվիրաները վաղ-
ուան հունձքերուն։

Դպրոցական գործունէութիւնը արդա-
րեւ կապուած է մեր մշակոյթի պատմու-